




“ԹՈՂ ՏՈՒՔ ՄԱՆՔ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՍԻ ԳԱՆ” ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ Ժ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՀՈԿՏԵՄԲԵՐ 1, 1881

ԹԻԻ 10



ԵՐԿԱԹԵԱՅ ՇՈՒԿԵՆԱԻ ՄԸ

Վերջին հարիւր տարուան մէջ նաւաշինութեան արուեստին յառաջագիւտութիւնը յայտնի կը ցուցնէ թէ ինչ մեծ յառաջացում եղած է գիտութեանց և արուեստից մէջ: Գեո. հարիւր տարի չկայ որ գիտնական մարդիկ յայտարարեցին թէ շոգենաւոր մը չկրնար Ազլանդիան ովկիանոսէն անցնել, և թէ շահաւոր պիտի չըլլայ շոգենաւոր վաճառք փոխադրել: Իսկ

այսօր շոգենաւոր գրեթէ բոլորովին ի բաց վարած են ծովերէ առաջատաւոր նաւերը: Հարիւր տարի չէ որ նաւ շինողները կ'ըսէին թէ երկաթեայ նաւ չիներ անհնար է, իսկ այսօր փայտեայ նաւ հազիւ կը շինուի: Թէև երկաթը ծանր է քան զջուր, և եթէ երկաթի կտոր մը ջուրի մէջ դրուի անմիջապէս կ'ընկզմի, սակայն և այնպէս ամէն մարդ գիտէ թէ երկաթեայ աման մը կը լողայ ջուրին

երեսը: Երբ մարմին մը ջուրին երեսը կը լողայ, իւր ծանրութեան չափ ջուր մեկդի կ'ընէ: Եթէ երկաթեայ նաւ մը բարակ երկաթէ է, կրնայ նաև շատ բեռ առնուլ և գեո. լողալ, քանզի նաւը չընկզմիր մինչև որ նաւուն և բեռան ծանրութիւնը նաւուն մեկդի ըրած ջուրին ծանրութենէն աւելի ըլլայ: Երկաթեայ նաւ չինելու օգուտը սա է որ քիչ երկաթով շատ զբաւոր նաւ մը կրնայ շինուիլ, մինչ

երկաթեայ նաւու մը չափ գորտուոր փայտեղէն նաւ մը շինելու համար կա- ռի շատ փայտ հարկաւոր է :

Առաջին երկաթեայ նաւը շինուե- ցաւ Անգղիոյ մէջ 1821 ին : Այս նա- յը 120 ոտք միայն երկայն էր : Իսկ հիմա երկաթեայ շոգենաւեր կը շին- ուին աւելի քան 600 ոտք երկայն , և այսպիսի շոգենաւք կը տանին իբր 8,000 տակառաշափ , կամ 6,400,000 քաշ բեռ , այսինքն այնչափ բեռ որ 40,000 ձի հազիւ կրնայ տանիլ : Պատկերին մէջ կը տեսնուի թէ նաւ մը ինչպէս կը շինուի : Երկաթի այն կորացեալ կտորներն որ նաւուն յա- տակէն կ'անցնին կը կոչուին կոպ , և այս կողերուն վրայ կ'ամրացուն իբր կէս մատ թանձր , և մէկու կէս կան- գուն լայն և չորս կամ հինգ կան- գուն երկայն երկաթեայ թերթեր , և երկաթեայ գերաններ կը ձգուին մէկ կողէն միւս կողը նաւը զօրացնե- լու , և տախտակամածն ամուր բռնե- լու համար : Խոշոր նաւեր երեք կամ չորս յարկ կ'ունենան , և երբ բեռով լեցուին իբր 10 կանգուն ջրոյ մէջ կ'ըն- կըզմին : Ամէն տարի նաւաշինութեան արուեստին մէջ նոր յառաջագիմու- թիւններ կ'ըլլան : Հիմա նաւ շինելու մէջ կը գործածուի պողովատ , քանդի պողովատն աւելի զօրաւոր է քան գեր- կաթ : Մեծ մեքենաներն , որ այս խոշոր նաւերը կը շարժեն ջուրի մէջ , այնչափ բարւոքուած են 15 տար- ուան մէջ , որ հիմա կը գործածեն իբր կէսն միայն այն վառելիքին զոր առաջ կը գործածէին : Այս ահագին շոգենա- լերէն իւրաքանչիւրը կը շինուի 200— 250 հազար լիրա ծախքով , բայց այն- չափ շատ բարձր կամ արմտիք կը կրեն որ մեծ շահ կը բերեն իրենց տէրերուն : Այս գեղեցիկ շոգենա- լերուն շատերը կը շինուին Անգղիոյ և Սկոտլանդի մէջ :

ՔԱՆ ՁԷՆՈՒԱԳԻՐ ԶԱՐՄԱՆԱԼԻ

Գարեգին և Նշան շատ կը բաղձա- յին տեսնել հեռագրատունը : Օր մը , դպրոցէն ետքը , այս երկու ար- զայք դային իրենց հօր խանութը , որ հեռագրատան ձիւղ գիմացն էր , և ինդրեցին երթալ անոր հետ տեսնել այն զարմանալի գիւտը : Հայրն հա- ձեցաւ անոնց խնդրոյն , և իսկոյն դա- ցին հեռագրատունը , և սկսան դի-

տել փոքրիկ մեքենան որ իբրև կեն- դանի լուր կը հաղորդէր :

Տղայք աղաչեցին իրենց հօրը հե- ռագիր զրկել իրենց հօրեղբօր : Հայ- րը հաճեցաւ , բայց փոքրիկ մեքենայն այնպէս դառնեալ էր , որ պաշտօնա- տարը չկրցաւ իսկ և իսկ կատարել անոր խնդիրը :

“Գիւք , դիւք , դիւք , սող , սող , քը- լիք , քիւք , քիւք ,” ընելով կ'երթար կու դար մեքենային փոքրիկ ցուցիչը : Վերջապէս ասոնց եկաւ կարգը . հե- ռագիրը զրկուեցաւ , և պատասխա- նը եկաւ :

Այն իրիկուն երկու տղայոց խօսքն այն հրաշալի մեքենային , հեռագրին , վրայ էր : “Աշխարհիս վրայ կա՞յ քան զայս զարմանալի բան մը , հայր ,” ը- սաւ Գարեգին : “Կայ ,” պատասխա- նեց հայրը . “ես աւելի զարմանալի բաներ լսած եմ :”

“Բայց , հայր ,” ըսաւ Նշան , “կար- ծեմ թէ լսած չէք երբէք որ լուր մը դացած է հեռու տեղ այնպէս ա- ըսող , ինչպէս կ'երթայ հեռագրով :”

“Այո , լսած եմ , որդեակ ,” ըսաւ հայրը :

“Լսած էք նաև որ նոյնչափ արագ եկած է պատասխան ,” յաւել Նշան :

“Այո , այո , աւելի շուտ և աւելի լուր քան հեռագրով ,” ըսաւ հայրը :

“Ի՞նչ կ'ըսէք , հայր ,” ըսաւ Գա- րեգին՝ աթոռը մօտեցնելով հօրը և անձկաւ նայելով անոր երեսը . “մը տեսնուած է երբէք հեռու տեղեր լուր հաղորդելու աւելի արագ և լուր կերպ մը քան զհեռագրին : Կարծեմ կատակ կ'ընէք :”

“Գիտցիր , որդեակ , որ ,” ըսաւ հայրը , “երբ ձեր հարցումներուն պատասխան կուտամ , ամենեին կա- տակ չեմ ընէր :”

“Շատ աղէկ ,” ըսաւ Նշան , “ը- տէք ուրեմն մեզ թէ ի՞նչ է լուր հա- ղորդելու այն կերպը , և ի՞նչ կորմա- նէ լուրագոյն է քան հեռագիրը :”

“Նախ ,” ըսաւ հայրը , “այս կեր- պը սպասել չի տար կարգի , քանզի հազարաւոր լուրեր միանգամայն կըր- նան երթալ և գալ այս կերպով ան- դադար և անարգել :”

“Այս ստուգիւ մեծ առաւելու- թիւն է ,” ըսաւ Նշան . “մենք մեր լուրը զրկելու համար բաւական սպա- սեցինք :”

“Երկրորդ ,” ըսաւ հայրը , “այն կերպը որոյ վրայ է խօսքս՝ պէտք չունի ոչ թելերու , ոչ ելեկարակա- նութեան և ոչ որ և իցէ մեքենայի՝ կատարելու համար իւր գործը . բայց քան զամենայն զարմանալին այս է որ հարկ չկայ ըսել ուրիշին ինչ որ կը խորհիս հաղորդել , քանզի առանց ըսելու պատգամի այլոց՝ իսկոյն պա- տասխանը կու գոյ քեզ . հարկաւոր է միայն որ ստուգիւ և միամտութեամբ փոփաքիս ընդունել խնդրոյդ պա- տասխանը : Թողունք այս ամէնը , լուր հաղորդելու այս կերպն ունի նաև սա առաւելութիւնը որ , որ և իցէ լուր կամ պատգամ զրկելու համար , այս ինչ կամ այն ինչ տեղ դիմելու հարկ չը- կայ : Անպատի մէջ , Ովկիանոսի վը- րայ , բազմամարդ քաղաքի մէջ , լեռ- ներու գլուխ , գիշեր կամ ցերեկ , հի- լանդութեան և առաջութեան ժամա- նակ , խռովութեան և անձկութեան մէջ մանաւանդ , հաղորդակցութեան այս ճամբան բաց է ամենուն : Եւ այս կերպով լուր հաղորդողներ որչափ և շատ ըլլան թուով , անոնց և ոչ միոյն , տկար տղու մը անգամ , խնդիրը կը մնայ անտես :” “Մեր միտքը և կամ- քը հաղորդելու այս զարմանալի կեր- պին վրայ գրուած մը կա՞յ , հայր ,” հարցուց Գարեգին :

“Այո , կայ ,” ըսաւ հայրը , “և կը յուսամ թէ չի նուազիր ձեր հե- տաքրքրութիւնն այս կերպին վրայ , եթէ ըսեմ ձեզ թէ Սուրբ գիրքն է որ կը սորվեցունէ մեզ հաղորդակ- ցութեան այս սքանչելի կերպը :”

“Սուրբ գիրքը ,” գոչեցին Գարե- գին և Նշան միաբերան :

“Այո , որդեակք ,” ըսաւ հայրը . “եթէ կը բերէք ձեր Աստուածաշուն- չը , կրնամ ցուցնել շատ համարներ որ կը հաստատեն ինչ որ ըսի ձեզ :”

Տղայք բացին Աստուածաշունչը , և հայրը ցուցուց անոնց Եսայեայ ԿԵ - գլխոյն 24 համարը , զոր Գարեգին կարգաց բարձր ձայնիւ . “Եւ պիտի ըլլայ որ անոնք դեռ չկանչած՝ պա- տասխան պիտի տամ , ու քանի որ դեռ կը խօսին՝ պիտի լսեմ :”

Յետոյ , “Բաց և կարգա ,” ըսաւ հայրը , “Եսայեայ ԾԲ , գլխոյն 9 հա- մարը .” և Գարեգին բացաւ այն տեղն ուր գրուած է . “Անտեսնը պիտի կանչես , և Տէրը պատասխան պիտի

տայ. պիտի աղաղակես, ու անիկա պիտի բռնէ, Ահա ես:”


“Հիմա բաց,” բառ հայրը, “Գանիելի Թ. գլխոյն 20, 21, 22 և 23 համարները.” և Գարեգին բանալով կարգաց սա խօսքը. “Ու երբոր ես տակաւին կը խօսէի, և իմ մեղքս ու իմ ժողովուրդիս իտրայելիւն մեղքը կը խոտտովանէի. և իմ աղաչանքս իմ Տէր Աստուծոյս առջև կը մատուցանէի, երբոր ես տակաւին աղօթքի մէջ կը խօսէի, ահա (առջի տեսիլքին հրեշտակը) Գարբիէլ շուտ մը թռչելով՝ ինձի գրպաւ իրիկուան զօհին ասեւնը, ու ինձի հասկըցընելով՝ ինձի հետ խօսեցաւ ու բառ, Ո՛ր Գանիէլ, հիմա երայ որ քեզի իմաստութիւն սորվեցընեմ: Քու աղաչանքիդ սկիզբը պատգամ ելաւ, ու ես եկայ որ պատմեմ:”

“Այս համարներէն կը տեսնեմ, հայր, որ,” բառ Գարեգին, “աղօթքի վրայ է ձեր խօսքը:”

“Կը տեսնէք ուրեմն, սիրելի որդեակք,” բառ հայրը, “որ երկնից հետ հազորդակցութեան այս կերպը զարմանալի է քան ուրիշ որ և իցէ կերպ հաղորդակցութեան, քանզի այս կերպով մեր փափաքներն արագ արագ կը ծանօթանան մեր երկնաւոր Հօր, և կ'ընդունինք պատասխան:”

Իւր ազգայ կեանքը նուիրեց բանասիրկերց վիճակը բարեօքելու: Գարձաւ Անգղիա, և կարգուեցաւ պաշտօնատար Պէտֆորտ քաղաքին մէջ յանցաւորները բռնելու: Մէկէն սկըսաւ իւր ուշադրութիւնը տալ Անգղիոյ բանտերուն, և տեսաւ որ բանտերն էին աղտեղի, մթին և առողջութեան վնասակար չէնքեր, և այնպիսի առաջարկութիւններ ըրաւ Անգղիոյ ազգային ժողովոյ որ յաջողեցաւ բա-

և առողջութեան յարմար: Յետոյ իւր ուշադրութիւնը դարձուց ուրիշ երկիրներու բանտերուն վրայ: Եւրոպայի շատ երկիրները պտտեցաւ, շատ նեղութիւններ կրեց և շատ վտանգներու պատահեցաւ ձեռք բերելու բանտերու մասին այնպիսի բարեկարգութիւններ զորս ձեռք բերած էր Անգղիոյ մէջ: Վարի պատկերին մէջ կը տեսնուի մարդասէրն Հովարտ որ բանտի մը դուռը նստած է և բան-



ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀՈՎՍԵՏ

Յովհաննէս Հովարտ ծնաւ յԱնգղիա, մօտ ի Լանտոն 1726 ին: Հայրն էր հարուստ մարդ մը: 1756 ին երբ Հովարտ իբր 30 տարեկան էր նաւ նստաւ Բարդուղայի Լիւպոն քաղաքն երթալու, բայց ճամբան ինկաւ Գաղիացի ծովահեններու ձեռքը քանզի այն ատեն Անգղիա և Գաղիա պատերազմ կ'ընէին իրարու հետ: Հովարտ բանաւ գրուեցաւ ըստ սովորութեան այն ժամանակին, և նեղութիւն ու վշտերը զորս կրեց մինչ բանտըն էր, պատճառ եղան որ Հովարտ

բեկարգութիւններ ձեռք բերել և շնորհակալութեան քուէ ստանալ երեսփոխանաց ժողովէն: Հովարտ շարունակեց իւր ջանքերը մինչև որ Անգղիոյ բանտերն եղան ժողովրդեան տուներուն պէս մաքուր

և տարկեալներուն հետ կը խօսի: Բանտարկեալք ըսած էին անոր անունը, և ուրախութեամբ կ'ողջունեն անոր գալուստը: Հովարտ հարստային Բուսիա Քերսոն գնաց և հին գէշ տենդ մ'առաւ խեղճ բանտարկեալէ մը ու

բուն դեղ տուած էր, և մեռաւ :  
 Հիմա «Բանտարկերոց բարեկամին»  
 Յովհաննէս Հովարթի անունն աշխարհ-  
 հաճանօթ է, և շատ երկիրներու մէջ  
 ընկերութիւններ որ կազմուած են հի-  
 ւանդներ և թշուառներ խնամելու  
 համար, յաճախ կը կոչուին «Հովար-  
 տեան ընկերութիւնը» :»

Արդարեւ «բարի անունը շատ հարս-  
 տութեանն աւելի ընտիր է» (Առակ  
 ԻԲ. 1)



ԻՌՆԱՐՀԷ, ԱՊԱ ԹԷ ՈՉ ԿԸ ԿՈՏԲՒՍ

Գիւղի մը մէջ բարեկամի մը այ-  
 ցելութեան գացած էի, կ'ըսէ Ամե-  
 լիկայի տղայոց թերթի մը խմբագրի-  
 րը : Բարեկամիս ատենն էր յայնկոյս  
 փոքրիկ գետի մը, որուն երկու ե-  
 ղերքին վրայ ծառեր անկուած էին :  
 Տանը ետին կային կարգ մը բլուրներ,  
 որոնցմէ ատեն ատեն հով կը փչէր  
 մեծ զօրութեամբ : Այցելութեանս օ-  
 բերուն մէջ իրիկուն մը փոթորկի նը-  
 շաններ տեսնուեցան, և գիշերը մը-  
 կալից էր : Հովը մերթ կը սուլէր,  
 մերթ կը դռար որտաման պէս, և  
 այնպէս կը վարներ ծառերուն որպէս  
 թէ զանոնք պիտի խէր իրենց ար-  
 մատներէն :


Երբ առաւօտ եղաւ, տեսնուեց որ,  
 թէպէտ մըրիկը դաղրած էր, սա-  
 կայն թողած էր իր սաստկութեան  
 սպառնացները : Ծաղիկներ և թուփեր  
 կտոր կտոր եղած, ոմանք ալ գետին  
 կործանած էին : Ծառերէն ոմանց  
 ձիւղերը կտորած էին, անոնքն իրեն-  
 նի մը խլուած էր արմատէն :

Տանը տիկիններէն մէկը պարտէզը  
 դնաց տեսնելու թէ ինչ եղած էին  
 իր ծաղիկները : Մինչ տիկինը պար-  
 տէզն էր, երկու աղջկունք անցան .  
 կրտսերը կտորտած ծառերը տեսնե-  
 լով ցուցուց զանոնք իր ընկերին, և  
 ըսաւ, «Ի՞նչպէս եղած է որ այս ծա-  
 ուերը կտորտած և երկիր կործանած  
 են, մինչ ուրիշները կանգուն կը կե-  
 նան» : «Չե՞ս գիտեր», պատասխա-  
 նեց ընկերը, «երբ հովը սաստկու-  
 թեամբ կը փչէր և կը զարնէր այն  
 ինկած ծառերուն, անոնք կ'ըսէին,  
 'Չե՞ր ուզեր խոնարհիլ', և այսպէս,  
 որովհետև անոնք խոնարհիլ չուզե-  
 ցին, հովը կտորեց և կործանեց զա-  
 նոնք . բայց միւս ծառերը որ կան-  
 գուն կեցած են, կ'ըսէին, 'Կը խո-

նարհիլը', և որովհետև խոնարհեցան,  
 չկտորեցան» :

Հոս տղոց համար աղէկ դաս մը  
 կայ : Ինծի ծանօթ եղող տղոցմէ ու-  
 մանց շատ օգտակար եղած պիտի ըլ-  
 լար, եթէ անոնք ըսած ըլլային, «Կը  
 խոնարհիլը», երբ անոնց ծնողքը զա-  
 նոնք կրթել կ'ուզէին բարի խրատ-  
 ներով : Բայց անոնք չուզեցին խոնար-  
 հիլ, և աւա՛ղ, չարաչար կտորտած  
 են հիմա : Ուրիշ տղայք ալ դարձ-  
 ցին մէջ չուզեցին խոնարհիլ, այլ  
 ապստամբ ըլլալով պատժուեցան և  
 վռնուեցան, և հիմա կտորտած են :  
 Ոմանք ալ նեղութեան ատեն չխո-  
 նարհեցուցին իրենց սրտերն Աստու-  
 ծոյ առջև, ինչպէս որ Աստուած կ'ու-  
 զէր, այլ խառայուցին իրենց պա-  
 րանոյները, և կտորեցան : Դարձ-  
 եալ ոմանք որ ուրիշներուն քով  
 սպասաւոր էին, չուզեցին խոնար-  
 հիլ իրենց տէրերուն արգար պա-  
 հանջոյ մտերուն, և հիմա կտորտած  
 ծառերու պէս անպիտան եղած են :

Հարար և խեղճ ուղի ուղի ուղի  
 չէ, և կործանման ու կորստեան կը  
 տանի այն ուղին ունեցողը : «Կոտու-  
 րածին սուջէն՝ հարարութիւն, ու  
 կործանման առջևէն ամբարտա ա-  
 նութեան ուղին կ'երթայ» : Հլու  
 հնազանդութիւնը ըսաւ որչա՛ն է քան  
 յամառ ըլլալը : Լուսադոյն է «ծնու-  
 զաց հնազանդ ըլլալ Տէրոջմով, որ ան  
 է արժանը» : Լուսադոյն է կատարել  
 ձեր պարտականութիւններն անոնց  
 որոնց ծառայել պարտական էք, ինչ-  
 պէս որ Սուրբ Գիւրգը կը պատուիրէ Լա-  
 ւադոյն է «Տէրոջը խրատը չանարգել» :  
 Չեր կամըր թող զիջանի Աստուծոյ :  
 Այսպէս ընելով կը պահուիք չարա-  
 չար կերպով խոնարհելէ : Եթէ ժա-  
 մանակին կը խոնարհիք, ապա կը  
 մնաք խորտակուելէ և կործանումէ :



«ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ Կ'ԵՐԹԱՄ»

Չեր կին մը իւր անտուր պղծատ  
 տղու մը տուաւ իւր աղջկան տունը  
 տանելու, և սխալմամբ մէկ մէծիտիյէ  
 տուաւ տղուն փոխանակ հարիւր փա-  
 րայի :

Հետեւեալ առաւօտուն կանուխ ծեր  
 կնոջ աղջկան տան դուռը զարնուե-  
 ցաւ, և երբ աղջիկը դուռը բացաւ,  
 տեսաւ տղայ մը որ զալով ըսաւ ծեր  
 կնոջ :

«Մայրիկ, գիտե՞ս, երէկ երեկոյ  
 մէկ մէծիտիյէ տալիս ինձ փոխանակ  
 հարիւր փարայի : Կարծեմ սխալմամբ  
 տալիս այնպէս չէ, անա մէծիտիյէդ» :

«Այո, զուտիս, սխալմամբ տալի,  
 և շատ շնորհակալ եմ որ բերիք Բայց  
 կ'ուզեմ գիտնալ թէ ինչպէս եղաւ որ  
 ետ բերիք այս ստակը, քանզի կ'ըսէիք  
 թէ ընտանիքը անօթութեան մեռնելու  
 սասիճան ազգաս են» :

«Այո, մայրիկ, ընտանիքս շատ աղ-  
 քաս են, բայց ես կիրակիօրեայ գըզ-  
 րոց կ'երթամ, կը սիրեմ գօթուս և  
 չեմ կրնար ուղղութեան հակառակ  
 գործ ընել» :



ԱՏՈՒՑ ՆՈՐՏԷՆՍՔԻՈՒՏ

1879 սեպ. 2 ին ճարտիկ Եղոյհան  
 քաղաքէն հեռագիր զարնուեցաւ Եւ-  
 րոպա թէ «վիկա», անուն Շուեռա-



կան չողենաւ մը յիշեալ քաղաքը հա-  
 սած էր հիւսիսային Եւրոպայէ Պէհ-  
 ընկի նեղուցի ճամբով : Առաջին ան-  
 գամն է որ չողենաւ մը յիշեալ ճա-  
 րով գացած է : Հիւսիսային ժողովն այն  
 իսկ ամառ ատեն այնպէս ծածկուած  
 է մեծ սառի կոյտերով որ շատ քիչ  
 չողենաւեր պիտի կրնան համարձա-  
 կիլ այն ճամբով Անգլիայէն ճարտի  
 երթալ : Բրոֆ Նորաէնսթրոլտ որ վե-  
 րջիեալ վասնդ այլից ճամբորդութիւնն  
 ընողներուն գլխաւորն էր, իրաւամբ  
 մեծ համբաւ ստացած է իւր հետու-  
 թեան և համարձակութեան համար,  
 և շատ պատիւ բնութեանմէ Եւրո-  
 պայի այն երկիրներուն մէջ ուստի  
 անցած է իւր հարկերիքը դառնալու  
 ատեն : Այս անձը Ֆինլանտիացի է :

Ամերիկայի Մեխիկոնարաց ընկերութեան կողմէն  
 Թմբազիւր ճ. Գ. ԿԻՒՆ  
 Ֆիլիպսըր Եօզուշու, Ամերիկան Խան

ԿՈՏՏԱՆԴՆՈՒՊՈՒԽՍ  
 ՏՊԱՐԱՐԱՐՈՒՄ Ա. ՅԱԿՈԲ ՊՅՈՒՅԱՆ